# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*19 հունվարի 2023թվականի N 35*

## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի N 89 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով .

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Հրազդան համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 8-ի «Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N89 որոշման N1, 22, 36 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1,2,3 հավելվածների:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

19 հունվարի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Հաստատված է
Հրազդան համայնքի ղեկավարի
2023 թվականի հունվարի 19-ի
N 35 որոշմամբ

Հավելված N 1
Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թ. փետրվարի 08-ի N 89 որոշման

## 1.Ընդհանուր դրույթներ

**1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

**Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր՝ 1.1-1)**

*Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) քարտուղարի (այսուհետ՝ քարտուղար) պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի առաջին ենթախմբում:*

**1.2. Ենթակա և հաշվետու է**

*Քարտուղարին «Համայնքային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը (այսուհետ՝ համայնքի ղեկավար):*

*Քարտուղարն անմիջականորեն ենթակա և հաշվետու է համայնքի ղեկավարին: Քարտուղարին անմիջականորեն ենթակա և հաշվետու են աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների պետերը և աշխատակազմի ստորաբաժանումներում (բաժիններում) չներառված այլ պաշտոններ զբաղեցնող անձինք:*

**1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

*Քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինում է աշխատակազմի բաժինների պետերից մեկը՝ համայնքի ղեկավարի հայեցողությամբ:*

*Օրենքով նախատեսված դեպքերում քարտուղարին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:*

**1.4. Աշխատավայրը**

*ՀՀ. Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1, Վարչական շենք:*

## 2. Պաշտոնի բնութագիրը

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

*Քարտուղարը՝*

*ա) ապահովում է աշխատակազմում համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը.*

*բ) մասնակցում է աշխատակազմի կառուցվածքային, հաստիքային, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու նախապատրաստման աշխատանքներին.*

*գ) ապահովում է աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի, դրանցում փոփոխություններ կատարելու նախագծերի մշակման աշխատանքների իրականացումը.*

դ) համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների և այդ պաշտոնները զբաղեցնող համայնքային ծառայողների ատեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացումը.

ե) աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքների մասին մրցութային հանձնաժողովի եզրակացությունը, իսկ այդ արդյունքների գրավոր բողոքի առկայության դեպքում նաև Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համապատասխան որոշումը ստանալուց հետո, աշխատանքային երեք օրվա ընթացքում, մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին (մասնակիցներից մեկին) նշանակում է փակալ պաշտոնում.

զ) հաստատում է աշխատակազմի ատեստավորման (այդ թվում՝ արտահերթ) ենթակա համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ցուցակները.

է) համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի ատեստավորման (այդ թվում՝ արտահերթ) ենթակա համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի, ինչպես նաև առաջատար պաշտոնների խմբի առաջին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ցուցակները.

ը) ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում է իր անմիջական ենթակայության տակ գտնվող համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը.

թ) աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների ատեստավորման արդյունքում զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու դեպքում, ինչպես նաև ատեստավորման արդյունքների գրավոր բողոքի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համապատասխան որոշման հիման վրա օրենքով սահմանված ժամկետում ընդունում է փակալ համայնքային ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին որոշում.

ժ) օրենքով սահմանված կարգով և ժամկետներում աշխատակազմի համայնքային ծառայողներին շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 2-րդ և 3-րդ դասի առաջատար ծառայողի ու Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին, 2-րդ և 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճաններ.

ժա) իր կողմից համայնքային ծառայության դասային աստիճան շնորհած աշխատակազմի համայնքային ծառայողին օրենքով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատելու հետ միաժամանակ իր հրամանով զրկում է նաև փակալ դասային աստիճանից.

ժբ) օրենքով նախատեսված դեպքերում սահմանված կարգով և ժամկետներում արտամրցութային կարգով նշանակումներ է կատարում աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններում.

ժգ) համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իր հայեցողությամբ որոշում է աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի ժամանակավոր թափուր պաշտոնները փոխարինող համայնքային ծառայողների կողմից զբաղեցնելու հարցը.

ժդ) օրենքով նախատեսված դեպքերում աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի ժամանակավոր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ փակալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձի, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կնքում է ժամկետային աշխատանքային պայմանագրեր.

ժե) աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում է օրենքով նախատեսված խրախուսանքներ և կարգապահական տույժեր.

ժզ) աշխատակազմի համայնքային ծառայողի 65 տարին լրանալուց առնվազն մեկ ամիս առաջ համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություն այդ համայնքային ծառայողի պաշտոն զբաղեցնելը մինչև մեկ տարի ժամկետով շարունակելու թույլտվության մասին.
ժէ) կազմակերպում է աշխատակազմում քննարկումների և խորհրդակցությունների անցկացման աշխատանքները.
ժը) համայնքի ղեկավարին է զեկուցում ամենօրյա փոստը և թղթակցությունները.
ժթ) համայնքի ղեկավարի ստորագրությանն է ներկայացնում նրա որոշումները և կարգադրությունները.
ի) աշխատակազմում կազմակերպում է տեխնիկական սպասարկման աշխատանքները.
իա) ապահովում է համագործակցությունը Հայաստանի Հանրապետության այլ համայնքապետարանների աշխատակազմերի հետ.
իբ) համայնքի ղեկավարին կիսամյակը մեկ ներկայացնում է հաշվետվություն իր կատարած աշխատանքների մասին.
իգ) իր անմիջական ենթակա և հաշվետու համայնքային ծառայողների կողմից իրենց կատարած աշխատանքների մասին ներկայացրած կիսամյակային հաշվետվությունների վերաբերյալ տալիս է համապատասխան եզրակացություններ.
իդ) ապահովում է աշխատակազմի գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը.
իե) ապահովում է համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը.
իզ) կազմակերպում և ապահովում է համայնքապետարանի աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների կողմից համայնքի ավագանու որոշումների նախագծերի նախապատրաստմանը.
իէ)կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը.
իը) ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրապարակումը.
իթ) կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ.
լ) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ.
լա) ապահովում է ավագանու որոշումների առաքումը համապատասխան մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում.
լբ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.
լգ) անհրաժեշտ տեղեկատվություն է տրամադրում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին:
լդ/ օրենքով սահմանված կարգով վարում է համայնքի զինապարտների գրանցամատյանը, համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություն զինապարտների ցուցակների վերաբերյալ, ինչպես նաև ըստ բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները՝ տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնելու համար:
լե/ օրենքով սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է զորակոչին, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին.
լզ/ իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում համայնքի ղեկավարին անհապաղ ներկայացնում է առաջարկություն՝ տարածքային զինվորական կոմիսարիատին այդ մասին գրավոր տեղեկատվություններ տրամադրելու համար.
լէ/ իր իրավասության սահմաններում մասնակցում է նախազորակոչային, զորակոչային տարիքի անձանց և պահեստազորայինների զինվորական հաշվառման բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց վերապահված լիազորությունների իրականացմանը:

ը/ իրականացնում է գաղտնի փաստաթղթերի մշակման, գաղտնի գործավարության վարման և գաղտնիության ռեժիմի ապահովման աշխատանքներ:
Քարտուղարն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ:

## 3. Կազմակերպական շրջանակը

### 3.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Քարտուղարը՝
ա)աշխատակազմում կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է աշխատակազմի ընթացիկ գործունեությունը.
բ)կատարում է համայնքի ղեկավարի հանձնարարականները.
գ)պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները, աշխատակազմի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

### 3.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Քարտուղարը՝
ա) լուծում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ.
բ) աշխատակազմի բաժինների պետերին և աշխատակազմի բաժիններում չընդգրկված այլ պաշտոններ զբաղեցնող անձանց տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:

### 3.3. Շփումները և ներկայացուցչությունը

Քարտուղարը՝
ա) աշխատակազմի ներսում իր լիազորությունների շրջանակներում շփվում է համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու անդամների, աշխատակազմում քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի համայնքային ծառայողների և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց հետ.
բ) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է այլ մարմիններում կազմակերպված նիստերին (խորհրդակցություններին) .
գ) աշխատակազմից դուրս շփվում և պարբերաբար հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, Հայաստանի Հանրապետության այլ համայնքների, միջազգային այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով և այլն:

### 3.4. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Քարտուղարը՝
ա)համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմինների ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.
բ)բացահայտում, վերլուծում և գնահատում է աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ.
գ)համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություններ՝ աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ:

## 4. Պաշտոնին ներկայացվող պահանջները

### 4.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Քարտուղարը ունի բարձրագույն իրավաբանական կրթություն

**4.2. Մասնագիտական գիտելիքները և հմտությունները**

*Քարտուղարն ունի.*

*ա) ՀՀ Սահմանադրության «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Զինապարտության մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.*

*բ)տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.*

*գ)ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.*

*դ)տիրապետում է ռուսերենին (ազատ) և մեկ այլ օտար (կարդում, կարողանում է բացատրվել) լեզվի:*

**4.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը**

*Քարտուղարը ունի համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող՝ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա հանրային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող՝ պետական ծառայության դասային աստիճան (կոչում) կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.*

## 5. Համայնքային ծառայության դասային աստիճանը

*Քարտուղարին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության առաջին դասի խորհրդականի դասային աստիճան:*

Հավելված 2

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Հաստատված է
Հրազդան համայնքի ղեկավարի
2023 թվականի հունվարի 19-ի
N 35 որոշմամբ

Հավելված N22
Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թ. փետրվարի 8-ի N89 որոշման

## 1. Ընդհանուր դրույթներ

**1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

**Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-9)**

*Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի (այսուհետ՝ բաժին) գլխավոր մասնագետի պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 3-րդ ենթախմբում:*

**1.2. Ենթակա և հաշվետու է**

*Բաժնի գլխավոր մասնագետին «Համայնքային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը (այսուհետ՝ քարտուղար):*
*Բաժնի գլխավոր մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է բաժնի պետին:*
*Բաժնի գլխավոր մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:*

**1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

*Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում բաժնի պետի տեղակալը, բաժնի գլխավոր մասնագետներից մեկը կատարում են պաշտոնի անձնագրով նախատեսված բաժնի գլխավոր մասնագետի աշխատանքները՝ բաժնի պետի հայեցողությամբ:*

*Օրենքով նախատեսված դեպքերում բաժնի գլխավոր մասնագետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:*

*Բաժնի գլխավոր մասնագետը բաժնի պետի տեղակալի, բաժնի այլ գլխավոր մասնագետի կամ բաժնի առաջատար մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց՝ բաժնի պետի հայեցողությամբ:*

**1.4. Աշխատավայրը**

*ՀՀ. Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1, Վարչական շենք:*

## 2. Պաշտոնի բնութագիրը

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

*Բաժնի գլխավոր մասնագետը.*

ա) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.
բ) իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում բաժնի պետին.
գ) անհրաժեշտության դեպքում, բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.
դ) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
ե) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
Բաժնի գլխավոր մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

## 3. Կազմակերպական շրջանակը

### 3.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Բաժնի գլխավոր մասնագետը՝
ա) բաժնի աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.
բ) օժանդակում է բաժնի ավելի ցածր պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողների աշխատանքներին, ինչպես նաև մասնակցում է բաժնի աշխատանքների ծրագրմանը, իսկ անմիջական ղեկավարի հանձնարարությամբ՝ նաև կազմակերպմանը.
գ) կազմում է ֆինանսավորման փաթեթները, մասնակցում է բյուջեի, եկամուտների և ծախսերի կազմման աշխատանքներին, կատարում է ամենօրյա եկամուտների և ծախսերի մուտքերի ամփոփում:
դ) պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

### 3.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Բաժնի գլխավոր մասնագետը մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը

### 3.3. Շփումները և ներկայացուցչությունը

Բաժնի գլխավոր մասնագետը՝
ա) բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.
բ) աշխատակազմի ներսում իր լիազորությունների շրջանակներում շփվում է աշխատակազմի քարտուղարի, աշխատակազմի այլ աշխատողների հետ, այդ թվում՝ այլ բաժինների աշխատողների և պաշտոնատար անձանց հետ.
գ) առանձին դեպքերում բաժնի պետի հանձնարարությամբ աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ:

### 3.4. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Բաժնի գլխավոր մասնագետը բաժնի պետի հանձնարարությամբ իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում մասնակցում է բարդ խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին

## 4. Պաշտոնին ներկայացվող պահանջները

**4.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

*Բաժնի գլխավոր մասնագետն ունի բարձրագույն կրթություն,*

**4.2. Մասնագիտական գիտելիքները և հմտությունները**

*Բաժնի գլխավոր մասնագետն ունի.*

*ա) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Գնումների մասին» օրենքների, աշխատանքային օրենսգրքի, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.*

*բ) գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ*

*գ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:*

**4.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը**

*Բաժնի գլխավոր մասնագետն ունի համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.*

## 5. Համայնքային ծառայության դասային աստիճանը

*Բաժնի գլխավոր մասնագետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:*

Հավելված 3

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Հաստատված է
Հրազդան համայնքի ղեկավարի
2023 թվականի հունվարի 19-ի
N 35 որոշմամբ

Հավելված N 36
Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թ. փետրվարի 8 -ի N89 որոշման

### 1. Ընդհանուր դրույթներ

**1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

**Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչ (ծածկագիր՝ 2.3-23)**

*Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչի պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 3-րդ ենթախմբում:*

**1.2. 1.2. Ենթակա և հաշվետու է**

*Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպչին «Համայնքային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը (այսուհետ՝ քարտուղար):*

*Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչն անմիջականորեն ենթակա և հաշվետու է բաժնի պետին:*

*Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչն իրեն ենթակա աշխատողներ չունի:*

**1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

*Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչի բացակայության դեպքում բաժնի գլխավոր կամ առաջատար մասնագետներից մեկը կատարում են պաշտոնի անձնագրով նախատեսված քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչի աշխատանքները՝ բաժնի պետի հայեցողությամբ:*

*Օրենքով նախատեսված դեպքերում քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:*

*Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչը քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչի կամ առաջատար մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց՝ բաժնի պետի հայեցողությամբ:*

**1.4. Աշխատավայրը**

*ՀՀ. Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1, Վարչական շենք:*

## 2. Պաշտոնի բնութագիրը

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

*Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչը հանդիսանում է հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատու:*
*Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչը.*
*ա) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.*
*բ) իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի պետին.*
*գ) անհրաժեշտության դեպքում, բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին.*
*դ) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.*
*ե)հանրային ծառայողներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն, ներկայացնում շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն.*
*զ)իրականացնում է բարեվարքության հարցերով վերապատրաստման կարիքների բացահայտում և վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաև բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված այլ ծրագրերի մշակում.*
*է) համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարի, էթիկայի հանձնաժողովի պահանջով կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկով կատարում է բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ.*
*ը) մշակում է հանրային ծառայողների բարեվարքության պլանների նախագծերը, դրանք ներկայացնում տվյալ մարմնում հաստատման.*
*թ) վարում է հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրություն.*
*2. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուն՝*
*1) պարտավոր է իր իրավասության շրջանակներում համագործակցել իրավասու մարմինների հետ, ապահովել ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների իրականացումը, հաշվետվությունների տրամադրումը, ինքնագնահատման զեկույցների կազմումը, հարցաշարերի լրացումը, մասնակցությունը հակակոռուպցիոն ոլորտին առնչվող քննարկումներին*
*2) պարտավոր է տրամադրել համապատասխան մարմնի գործառույթներին առնչվող ռազմավարական փաստաթղթերով նախատեսված՝ հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվություն, պարզաբանումներ, միջոցներ ձեռնարկել համապատասխան մարմնի կողմից ոլորտային միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու ուղղությամբ*
*3) իրավունք ունի համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի շրջանակներում տվյալ մարմնի ստորաբաժանումներից պահանջելու և ստանալու տեղեկատվություն.*
*4) իրավունք ունի հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիտորինգի համար պատասխանատու մարմնից պահանջելու և ստանալու մեթոդական աջակցություն, խորհրդատվություն*

ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների վերաբերյալ:
3. Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-քարտուղարության հարցերով կազմակերպիչն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

## 3. Կազմակերպական շրջանակը

### 3.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-քարտուղարության հարցերով կազմակերպիչը՝
ա) Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի աշխատանքների կազմակերպման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.
բ) օժանդակում է քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի ավելի ցածր պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողների աշխատանքներին, ինչպես նաև մասնակցում է քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի աշխատանքների ծրագրմանը, իսկ անմիջական ղեկավարի հանձնարարությամբ՝ նաև կազմակերպմանը.
գ) իր իրավասության շրջանակներում կազմում է իրավական ակտերի նախագծեր
դ) պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

### 3.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-քարտուղարության հարցերով կազմակերպիչը մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

### 3.3. Շփումները և ներկայացուցչությունը

Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-քարտուղարության հարցերով կազմակերպիչը՝
ա) Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.
բ) Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի ներսում իր լիազորությունների շրջանակներում շփվում է քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի պետի, քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի այլ աշխատողների հետ, այդ թվում՝ այլ բաժինների աշխատողների և պաշտոնատար անձանց հետ.
գ) առանձին դեպքերում քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի պետի հանձնարարությամբ քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ:

### 3.4. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի պետի հանձնարարությամբ իր պաշտոնի անձնագրով նախատեսված դեպքում մասնակցում է բարդ խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին:

## 4. Պաշտոնին ներկայացվող պահանջները

### 4.1. Կրթություն, որակավորման աստիճանը

*Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-քարտվարության հարցերով կազմակերպիչը ունի բարձրագույն կրթություն*

### 4.2. Մասնագիտական գիտելիքները և հմտությունները

*Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-քարտվարության հարցերով կազմակերպիչը ունի.*
*ա) ՀՀ Սահմանադրության, ՀՀ աշխատանքային օրենսգրքի, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Արխիվային գործի մասին» օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.*
*բ)տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.*
*գ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.*

### 4.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

*Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-քարտվարության հարցերով կազմակերպիչը ունի համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.*

## 5. Համայնքային ծառայության դասային աստիճանը

*Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ-քարտվարության հարցերով կազմակերպիչին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ


2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*19 հունվարի 2023թվականի N 36*

### ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջներով, հիմք ընդունելով ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից տրամադրված հատակագծերը և Արարատ Հարությունյանի 2023 թվականի հունվարի 17-ի դիմումը.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Երևան քաղաքի Շարուրի փողոց 31 շենքի թիվ 23 բնակարանի բնակիչ Արարատ Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N04012023-07-0049, գաղտնաբառ՝ 3WI5RDDYKNMM/ Հրազդան քաղաքի Վերին Աղբյուրակ այգեգործական զանգվածի 4-րդ փողոց 98 հասցեում գտնվող հողամասի 0.05030հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ այգեգործական զանգված, 4-րդ փողոց 98/1, իսկ 0.05030հա մակերեսով մասինը թողնել նույնը՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ այգեգործական զանգված, 4-րդ փողոց 98:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

19 հունվարի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ՈՐՈՇՈՒՄ

*20 հունվարի 2023թվականի N 37*

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09 -ի N 208-Ն որոշման հավելվածը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 22 /քսաներկու/ հատ,
2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 19 /տասնինը/ հատ,
3)համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման՝ 4 /չորս/ հատ,
4)համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու՝ 7 /յոթ/ հատ,
5)սեղմված բնական գազի վաճառքի՝ 1 /մեկ/,
6)հեղուկ վառելիքի վաճառքի՝ 1 /մեկ/ հատ,
7)համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի՝ 3 /երեք/ հատ,
8)առևտրի օբյեկտին ժամը 24:00-ից հետո աշխատելու՝ 1 /մեկ/ հատ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

20 հունվարի 2023թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2023 թ. հունվար 20-ի
N 37 որոշման

ՑՈՒՑԱԿ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպության անվանումը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության չափսը, մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | ԱՁ Զոյա Մելքոնյան | ք. Հրազդան, Րաֆֆու փողոց, տուն 22 | ք. Հրազդան, Րաֆֆու փողոց, տուն 22 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 2. | ԱՁ Զոյա Մելքոնյան | ք. Հրազդան, Րաֆֆու փողոց, տուն 22 | ք. Հրազդան, Րաֆֆու փողոց, տուն 22 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 3. | ԱՁ Նազիկ Մարգարյան | ք. Հրազդան, Շահումյան փողոց, տուն 59 | ք. Հրազդան, Շահումյան փողոց, տուն 59 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 4. | ԱՁ Նազիկ Մարգարյան | ք. Հրազդան, Շահումյան փողոց, տուն 59 | ք. Հրազդան, Շահումյան փողոց, տուն 59 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 5. | ԱՁ Կարինե Գրիգորյան | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 12/46 | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 14 շենք 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 6. | ԱՁ Կարինե Գրիգորյան | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 12/46 | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 14 շենք 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 7. | ԱՁ Ռաֆիկ Մարկոսյան | ք. Հրազդան, Նար-Դոս 78 | ք. Հրազդան, Շահումյան 68/5 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 8. | ԱՁ Ռաֆիկ Մարկոսյան | ք. Հրազդան, Նար-Դոս 78 | ք. Հրազդան, Շահումյան 68/5 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 9. | ԱՁ Գրիգոր Գրիգորյան | գյուղ Ջրառատ, 4-րդ փողոց տուն 6 | գյուղ Ջրառատ, 4-րդ փողոց տուն 6 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 10. | ԱՁ Գրիգոր Գրիգորյան | գյուղ Ջրառատ, 4-րդ փողոց տուն 6 | գյուղ Ջրառատ, 4-րդ փողոց տուն 6 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 11. | ԱՁ Մելանյա Դավթյան | գյուղ Քաղսի, 8-րդ փողոց, տուն 20 | գյուղ Քաղսի, 1-ին փողոց,50/1 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 12. | ԱՁ Մելանյա Դավթյան | գյուղ Քաղսի, 8-րդ փողոց, տուն 20 | գյուղ Քաղսի, 1-ին փողոց,50/1 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 13. | ԱՁ Վեներա Մկրտչյան | ք.Հրազդան, Վերին Աղբյուրակ 33 | ք.Հրազդան, Վերին Աղբյուրակ 33 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 14. | ԱՁ Վեներա Մկրտչյան | ք.Հրազդան, Վերին Աղբյուրակ 33 | ք.Հրազդան, Վերին Աղբյուրակ 33 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 15. | ԱՁ Լևոն Գևորգյան | ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 62/13 | ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 20 շենք, 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 16. | ԱՁ Լևոն Գևորգյան | ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 62/13 | ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 20 շենք, 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 17. | ԱՁ Սոնյա Ալեքսանյան | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, ՀՄ 455 | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, ՀՄ հանրակացարանների հարող տարածք | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 18. | ԱՁ Սոնյա Ալեքսանյան | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, ՀՄ 455 | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, ՀՄ հանրակացարանների հարող տարածք | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 19. | ԱՁ Սլավիկ Ցախչիրենյան | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 30/60 | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 89/2 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 20. | ԱՁ Սլավիկ Ցախչիրենյան | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 30/60 | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 89/2 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 21. | ԱՁ Արմեն Մովսիսյան | գյուղ Լեռնանիստ, 1-ին փողոց, 8 փակուղի, տուն 10 | գյուղ Լեռնանիստ,7-րդ փողոց, թիվ 4 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 22. | ԱՁ Արմեն Մովսիսյան | գյուղ Լեռնանիստ, 1-ին փողոց, 8 փակուղի, տուն 10 | գյուղ Լեռնանիստ,7-րդ փողոց, թիվ 4 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 23. | ԱՁ Անահիտ Վարդանյան | գյուղ Լեռնանիստ, 4-րդ թաղամաս, տուն 33 | գյուղ Լեռնանիստ, 2-րդ փողոց, 52/1 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 24. | ԱՁ Անահիտ Վարդանյան | գյուղ Լեռնանիստ, 4-րդ թաղամաս, տուն 33 | գյուղ Լեռնանիստ, 2-րդ փողոց, 52/1 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 25. | ԱՁ Զեփյուռ Հարությունյան | գյուղ Լեռնանիստ, 1-ին փողոց, տուն 30 | գյուղ Լեռնանիստ, 1-ին փողոց, թիվ 26 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 26. | ԱՁ Ձմիյրո Հարությունյան | գյուղ Լեռնանիստ, 1-ին փողոց, թիվ 30 | գյուղ Լեռնանիստ, 1-ին փողոց, թիվ 26 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակիչների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 27. | ԱՁ Սուսաննա Խաչատրյան | գյուղ Լեռնանիստ, 7-րդ փողոց, տուն 16 | գյուղ Լեռնանիստ, 7-րդ փողոց, տուն 16, 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 28. | ԱՁ Սուսաննա Խաչատրյան | գյուղ Լեռնանիստ, 7-րդ փողոց, տուն 16 | գյուղ Լեռնանիստ, 7-րդ փողոց, տուն 16, 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակիչների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 29. | ԱՁ Մարիամ Հունանյան | ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 124/50 | ք. Հրազդան, Պուրակային 33 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 30. | ԱՁ Մարիամ Հունանյան | ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 124/50 | ք. Հրազդան, Պուրակային 33 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակիչների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 31. | ԱՁ Անուշ Նիկողոսյան | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 42/26 | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 32/7 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 32. | ԱՁ Անուշ Նիկողոսյան | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 42/26 | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 32/7 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակիչների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 33. | ԱՁ Մարինե Կիրակոսյան | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 35/5 | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 35 շենք, 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 34. | ԱՁ Մարինե Կիրակոսյան | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 35/5 | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 35 շենք, 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակիչների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
| 35. | ԱՁ Համեստ Միքայելյան | ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս,207/27 | ք. Հրազդան, Երևանյան խճուղի 17 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի 1-ին եռամսյակի համար |
